

ՏԱՍՆԵՐՈՐԻՒ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից անկախ խմբագրությունները:

Օտարաբնակները չեն կարող
Խմբագր. Պեդակույա «Մուսկա»

Խմբագրությունը բաց է առաջ օտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Հայտարարութիւնների համար, զմայում են
խրատարային րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուսաւորութիւն և անտեսական ոյժ:—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ս. Պետրոսեղբայր
Ներքին լուսաւորութիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ, Գեր-
մանիա: Բազմաթիւ: Աւստրո-Ունգարիա: Արտա-
քին լուսաւորութիւն:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:—ՏԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ:—ԲՈՎԱՆՈՒԹԻՒՆ: Դաւիթ Բէկ:

ԼՈՒՍԱՆՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՅԺ

III

Մեր անցեալ յօդածները կարգաւոր, ընթերցողը մեզ կարող է ասել. «Ի՞նչ է մեզ կրաշխատ որ որ ձեր հայեացքները սխալ չեն, որ դուք Հայաստանի պէտքերի վրա խօսելով չէք սխալվում»:

Գուցէ այդ նկատողութիւնը արդար է, բայց այն ժամանակ կարող ենք հաստատ ասել որ Կ. Պօլսի հայերը, Հայաստանից աւելի էլ հեռու լինելով քան թէ մենք, մեզանից աւելի էլ անջատված լինելով իրանց հայրենիքից, — մեզանից էլ աւելի քիչ գիտեն թէ ի՞նչ է Հայաստանի անհրաժեշտ պահանջը:

ձեռնարկ է մեր ինտելիգենցիայի մեծ մասը թիւրքաց Հայաստանը չէ տեսել, բայց այստեղ, Անդրկովկասում, ուստաց Հայաստանում և Վրաստանում, մենք մեր աչքերի առաջ ունենք Հայ գիւղացիներ, Հայ արուեստագետներ, ծանօթ ենք Հայ վաճառականութեան, Հայոց ժողովրդական թէ քաղաքային և թէ գիւղական դարոյնների հետ, Հայոց հասարակական կեանքի հետ, Հայոց հասարակական կեանքի հետ,

վերջապէս ապրում ենք բաւական խիտ բնակվող Հայ տարրի մէջ: Ծանաչում ենք նրա բարք ու վարքերը, նրա կեանքի պայմաններն ու պահանջները և համեմատութեամբ գտնելով՝ կարող ենք եզրափակել թէ ի՞նչ է Հայի դրութիւնը, նրա պահանջը թիւրքաց Հայաստանում: Մեր մամուլն էլ Ռուսահայաստանի ամեն անկիւններին մեզ ծանօթացնում է Հայ տարրի կեանքի հետ, ուսումնասիրելով պիտաւորապէս երևանի նահանգի Հայ տարրը, որտեղ հայերը աւելի խիտ են բնակվում քան թէ թիւրքաց Հայաստանում:

Այդ բոլոր աշուղ հանգամանքներից դուրս է Կ. Պօլսի Հայ ինտելիգենցիան: Թիւրքաց մայրաքաղաքը Բիւզանդիայի հողի վրա գտնվելով և կտրված լինելով ահագին տարածութեամբ Հայաստանից, Կ. Պօլսի Հայ ինտելիգենցիան երբեք իր կեանքումն էլ չէ տեսել մի Հայ գիւղ, երբեք չէ տեսել մի Հայ գիւղացու արօրը ձեռքի, այլ տեսել է նրան միայն որպէս Կ. Պօլսի փողոցների բեռնակիր՝ փոխան մէջքին: Կ. Պօլսի Հայ մամուլը մինչև վերջին ժամանակները գուրդ էր Հայաստանից ստացվող Հայ տարրի տնտեսական կամ հասարակական կեանքը նկարագրող թղթակցութիւններից, պօստ-պօստ ծանաչում էր Հայաստանը միմիայն բանաստեղծական, իրականութիւնից դուրս ներկայացրած թղթակցութիւնների միջոցով...:

Եւ ահա Հայաստանից կատարելապէս անջատված, նրան բոլորովին օտար Կ. Պօլսի մէջ հիմնվում են ընկերութիւններ, ու

րոնք յանձն են առնում առաջնորդել Հայաստանի բարոյական և մտաւոր բարեօրոշման գործը և որոնց անդամներից ոչ մի չէ երբեք Հայաստանում չէ եղել, ոչ մի չէ Հայաստանի չէ:

Կ. Պօլսից հրահանգներ կաղմել Հայաստանի ուսման և Հայաստանի հասարակական բարեօրոշման համար, — անհրաժեշտ է թող Կ. Պօլսի ինտելիգենցիան, եթէ կամենում է գործել Հայաստանի համար, վերադառնայ Հայաստան, նախ ուսումնասիրել այդ երկիրը, նրա անհրաժեշտ պէտքերը և ապա այդ պէտքերին համեմատ հրահանգներ կաղմի և սկսի գործել:

Կ. Պօլսի ազգային ժողովը իր մէջ չէ պարունակում Հայաստանի շահերը ներկայացնող տարրեր, Կ. Պօլսի ազգային գրականութիւնը մինչև վերջին ժամանակները հարստանում էր Ալեքսանդր Գիւմայի և Վիկտոր Զիւզոյի վէպերի թարգմանութիւններով, մենք չենք տեսնում թիւրքաց մայրաքաղաքի տպարաններից դուրս եկած ոչ մի Հայոց վերք, որ ուսումնասիրած լինէր Հայաստանի վիճակագրութիւնը, նրա ազգագրութիւնը, որ ներկայացնէր մեզ հայրենիքի քաղաքատնտեսական նկարագիրը, ոչ մի ինքնուրոյն վէպ, բոման ազգային ժամանակակից հասարակական կեանքից չէր ստեղծագործեց պոստիցի Հայի հանձարը... Միայն ազգային գրականական ստեղծութիւնները՝ այն փոստ, անիմաստ, անշնորհ պատմական բոմաններն ու թատերական գրքեր ու աւանդներն են, որոնց այնքան առատութեամբ

ընծայում է մեզ իրական հողից դուրս, բոմանական ոգով կրթված պոստիցի...

Նախ պէտք է ուսումնասիրել մի երկիր և ապա նրա վրա ներդրել կրթական կերպով և նրանից օգուտ քաղել: Պարզ է որ ուսումնասիրած չը լինելով Հայաստանը, պոստիցի Հայը չէր կարող ոչ ներդրել իր երեւակայութեան մէջ միայն կեանք ունեցող հայրենիքի վրա, չէր էլ կարող ուրիշ կողմից շահվել այդ հայրենիքից: Նրբ էք տեսել որ Կ. Պօլսում կաղմէր մի ընկերութիւն Հայաստանը գիտականապէս ուսումնասիրելու համար, կամ օգտվելու համար երկրի բնական բերքերից, Հայաստանի բնական բերքերը վաճառահանելու և նրա արգիւնաբերութեան աւելի լայն զարգացմանը նպաստելու...:

Ներկայից մէկը. թող Կ. Պօլսի հայերը կամ խոստովանվեն որ չեն ծանաչում Հայաստանը, չեն կարող իրանց հայրենիքին ոչինչ օգուտ տալ, ուրեմն կատարելապէս հրաժարվեն Հայաստանի վրա ներդրածութիւն ունենալու և նրան առաջնորդելու գիտաւորութիւնից, — կամ եթէ անկողծ կերպով կամենում են ծառայել իրանց ազգին, թող վերադառնան Հայաստան:

Բայց ինչ ծանալարհով պէտք է կատարվի այդ վերադարձը գէպի հայրենիքը, — այդ մենք կը բացատրենք մեր հետեւեալ յօդածում:

Գ. Ա.

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Թ.

Դաւիթ ուրացողին կալանաւորելուց յետոյ Տաթևի վիճակը աղաւթեցաւ մի չարագործից: Այդ նոր վատակը, որ Ֆաթալի խանի աջ ձեռքն էր, հենց որ լսեց Բեկի Սիւրանի մէջ կատարած յաղթութիւնները, հենց որ իմացաւ նրա Տաթևի մօտենալը, պատրաստվեցաւ առաջն առնել: Նա հաւաքեց իր ձեռքի տակ գտնված պարսկական զօրքերը, և տեղային հայերից ևս բաւական բազմութիւն աւելցնելով պարսիկների հետ միացնելով, աշխատում էր թող չը տալ Բեկին Տաթևի սահմանը մանել: Զօրը աջակցում էր Դաւիթի անուշտով որդին, որ ծնված էր պարսիկ կնոջից:

Բեկի հրամանի ներքոյ, ինչպէս մեզ յայտնի է, այդ ժամանակ կային մօտ 500 զինված մարդիկ: Իսկ ուրացողի ուժերը հնգապատիկ աւելի էին: Նրանք բռնիկ էին գէպի Տաթև տանող ճանապարհների բոլոր անցքերը:

Բեկը նստած էր իր սառուլար *) ձիւ վրա, որ Սիւրանաց աշխարհի ամենաբնորոշ նոյգիների տեսակիցն էր: Նա գնում էր ամենից առաջ, չըձայագաւթում իր թիկնապահներով: Նրա կողքին ձիավարում էր Ներսէս արքեպիսկոպոսը: Զանապարհը ընկած էր նեղ ձորի միջով, որ իր զբաւառին ելեկէններով երբեմն բարձրանում էր լեռների բարձրաւանդակներ վրա, իսկ երբեմն լինում էր խորին անդունդների մէջ: Սարերը պատած էին անթափանցիկ անտառով: Ամեն

*) Առաւելար կոչվում են Սիւրանաց աշխարհի տակեղոյն ձիաները, որ մի առանձին ցեղ է:

բոլոր կարելի էր սպասել խիտ ծառերի ետեւից դարանամուտ թշնամու հրացանի արձակվելը և դնողի սլացումը:

Բայց Բեկը, այդ զգուշ, չըձայացեց զինուորը, կարծես, ուշադրութիւն չէր դարձնում: Նա լուռ էր և մտախոհ: Ակամայ տկուրութիւնը, որ տիրեց նրա սրտին, համարեա մոռանալ էր տուել թէ ինչ փառապաշտ տեղում է գտնվում ինքը, ուր ամեն մի քար, ամեն մի ժայռ, ամեն մի թուփ ու ծառ մահ էին սպառնում անդաւորին: Նա մինչև անգամ մոռացել էր այն զինված բազմութիւնը, որ նրա ետեւից գալիս էր:

Նրա ձաքի առջև տարածվում էր իր ծննդավայրը՝ Տաթևի երկիրը: Բոլոր լեռները, անտառները, ձորերը ու հովիտները ծանօթ էին նրան: Բոլոր ճանապարհները, ամենաանշան չաւիղներն անգամ գիտէր նա: Այդ լեռների վրա, իր մանկութեան օրերում, արածացնում էր նա իր հօր այծերը: Այդ անտառներում իր ընկերների հետ քաղում էր նա զանազան տեսակ պտուղներ: Այդ արնթաց, փրփրացող գետակների մէջ շատ անգամ լողացել է նա: Բոլորը մնացել էր մի և նոյնը, ոչինչ չէր փոխվել: Փոխվել էր միայն ինքը...:

Շուտով կը տեսնէր նա Տաթևի աւանը: Գուցէ դեռ ևս չէին կառուցել իր հայրական խրճիթը, որի մէջ անցուցել էր իր մանկութեան անհոգ պայծառ օրերը: Բայց ուղբեր էին ընկելում այժմ այն խրճիթի մէջ: Ուղբեր և բնակվելին, բայց նրանցից էր ոչ մէկը այն չէր լինելու, որին նա կը փափաքէր տեսնել:

Շուտով առաքիաները զարթոյցին նրա մէջ տկուր յիշատելութիւններ: Արդեօք կը տեսնէր այն մօրը, որ այնքան քրքուշ սրտով սիրում էր իր բան: Արդեօք կը տեսնէր այն հօրը, որ այնքան բարի էր, որ իր չքաւորութեան և դժբախտութեան մէջ ևս դարձեալ գիտէր լուր կրթել անուշամիտ սիրելի որդուն: Ո՞րտեղ էին նրանք: Ինքը չի պիտի կարողանար ուրախացնել նրանց,

ասելով. «տեսէք, ահա ձեր որդին, վերադառնում է ձեզ մօտ փառքով ու պատուով, զրկեցէք նրան»:

Նա յիշեց Ֆաթալի խանի բանակը, յիշեց այն կրակը, որի մէջ այրվեցան իր հայրը, իր մայրը, իր ազգականները... Յիշեց այն մարդուն, որ իր ծնողներին մահուան պատճառ դարձաւ: Այսօր նոյն չարագործը պարսիկ զօրքերով կանգնած էր իր ճանապարհի վրա, որ արդէն նրան իր հայրենիքի գոնէ աւերակները տեսնելու:

— Տեսնում եք, սրբազան, ասաց Բեկը Ներսէս արքեպիսկոպոսին, որ եկել էր Ենիքէլից՝ նրան Տաթև տանելու, — մեր ձեռնարկութեան հենց ըսկընում մեր առջև դուրս է գալիս մի ուրացող հայ:

— Այն հայը, որի հարստահարութիւններից ազատվելու համար ձեր ծնողները իրանց այրեցին կրակի մէջ, պատասխանեց սրբազանը: — Այն կը լսակից դուք միայն աղաւթեցաք, Բեկ:

— Այդ տկուր պատմութիւնը դուք արդէն գիտէք, սրբազան, խօսեց Բեկը: — Նրանում է, իմ և այդ մարդու ճակատագրի մէջ մի բան կա, որ կրակը մեծ դեր է խաղում...:

— Այո, այն ժամանակ նա կրակ թափեց ձեր ծնողների վրա, իսկ այսօր դուք կրակ կը թափէք նրա գլխին, ասաց սրբազանը ծիծաղելով: — Հաշիւը պարզ կը գտաւ գայ:

— Տեսնե՛ք... պատասխանեց Բեկը և դարձաւ ընկաւ տկուր մտախոհութեան մէջ:

Նրանք դուրս գալով ձորից, գտնվում էին այժմ մի լեռնային բարձրաւանդակի վրա, սրտեղից տեսելով Բեկի տկուր արամադութիւնը, թողեց նրան, և իր ձին յետ պահելով, կանգ առեց, մինչև հասաւ Միսիթար սպարապետը Բայրիդուր իշխանի հետ:

— Նայե՛ք, ասաց նրանց, — նայե՛ք այդ հրաշալի բնութեանը: Սիւրանցի հայը ոչ մի բան չի կրաւորէ չունի գանդատվելու Աստուծոյ:

Թէ ինչու ինքը թշուառ է և օտարի ծառայ: Երբ Աստուած մի ժողովրդի տալիս է այսպիսի երկիր, որ իր բնական արդեւթիւններով ամեն յարմարութիւններ ունի պաշտպանելու նրան թշնամու յարձակումներից, — այդ ժողովուրդը ինքն է մեղաւոր, որ չէ կարողանում օգուտ քաղել Աստուծոյ նորհած պարգևից:

Եւ իրաւ, վայրենի բնութիւնը հիացնելու չափ աքանչելի էր: Գէպի ամեն կողմ անկանոն կերպով տարածվում էին լեռնային ցանցաւորակ շղթաներ, որոնք խիտ կերպով գետեղված էին միմյանի մօտ, թողնելով իրանց միջնապայրում նեղ և խորին ձորեր: Այդ շղթաների վրա, սղոցի ատամների նման, բարձրանում էին սաւերի սուր դաշակները, որ կործանում էին ամպերի մէջ: Կուսական անտառը, որպէս մի կանաչազարդ վերաբերու, ծածկում էր լեռների մերկութիւնը և նրանց աւելի անմառաչելի էր դարձնում: Այն մի արդեւթիւն արարած չէր կարող ոտք կոխել այդ բարձրութիւնների վրա. միայն արագաթիւղ արծիւը այնտեղ ժայռերի պատուական ժիւղ գնում էր իր լոյսը:

— Զննարկում է, սրբազան, պատասխանեց Միսիթար սպարապետը, — սիւրանցի հայը ինքն է մեղաւոր, որ չէ կարողացել օգուտ քաղել իր հայրենիքի ամուր գիւղերից: Բայց Հայաստանի որ կողմը այսպէս չէ: Հայաստանը ամեն տեղ տալիս է մեզ բնական արդեւթիւններ, Բայց մեր լեռներից աւելի օգուտ են քաղել օտարները, քան թէ մենք ինքներս:

Բայրիդուր իշխանը, որ լսում էր այդ խօսակցութիւնը, և ինքը ոչ տակաւ հիացած էր չըձայագաւթող լեռնային և անտառներով, խօսակցութեան մէջ մտաւ, ասելով.

— Աստուած է վկայ, այդ ժողովուրդը մորթելու արժանի է: Նա ինքն մեծ ուրախութեամբ կը վեր առնէ մի սուր և բուրբիւն կը կտորէի: Բայց մի դարմանալի բան կա, որ ինքն էլ չէմ հասկանում թէ ինչ է: Նա աստիկ տուում են

բերութեամբ զանազան դիտողութիւններ է ա-
րել: Նա մինչև անգամ լուծում է քիմիական
բաղադրութիւններ և մետաղներ, նոյնպէս և այլ
և այլ քիմիական բաղադրութիւններ է կազմում:
Նա հետեւեալն է պատմում իր մետաղալուծու-
թիւն ուսանելու մասին: «Երբ ես հայրենիքումս
տեսայ, որ դժուարանում եմ մետաղներ լուծել,
դիմեցի մի ոսկերչի, առաջարկելով նրան, որ
ինձ ուսուցանի իր արհեստը միայն այն պայմա-
նով, որ ես մի ամբողջ տարի առանց վարձի
ծառայեմ» նորան, բայց մի ամիս չանցած երբ
արդէն սովորեցի մետաղներ լուծել, հեռացայ
գործատին: Այս երկրայի եղբայրը արգելում
է նրան այսպիսի բաներով պարագել՝ և խրում
է նրա գրեթե և գործիքները, բայց երեխան իր
լացի դորութեամբ հետ է ստանում: Նրա հայրե-
րենիքը Հին-Նախիջևանն է, որտեղ ծնված է աղ-
քատ ընտանիքից: Նա ելեկտրականութեան տե-
սութիւնը աւելի լաւ է բացատրում քան նոյն
դարանցի բարձր դաստառն աշակերտները: Ամ-
բողջ ուսումնարանը դարձանք է այդ մասնակի
վրա: Ախոստ, որ հայ ընդունակութիւնները ի-
րանց սաղմոյց դուրս գալու օրից թառամում են
առանց օգնութեան:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալը:
Նորերում գերմանական մամուլը չափա-
զանց անհանգստացաւ, երբ բայեստագի
նիստերից մէկի ժամանակ իշխան Բիսմարկ
մինչև այն աստիճան հասցրեց իր անբա-
ւականութիւնը առաջադեմներից, որ սպառ-
նաց Բելլինին և պարլամենտին, թէ նա
մտադիր է մայրաքաղաքը կասեց տեղա-
փոխել: Ի՞նչի անպատճառ կասեց և ոչ
թէ Ֆուլդա կամ Կարլստատ: Ամբողջ Գեր-
մանիայի պատմական նշանակութիւն ունե-
ցող տեղերից միայն Ֆրանկֆուրտը-Մայնի-
վրա կարող է մրցել Բելլինի հետ թէ իր
ընդարձակութեամբ, թէ հարստութեամբ և
թէ պատմական յիշատակներով: Իտալական
կառավարութեան նման պրուսականն էլ
գերմանական կառավարութիւնը դառնալուց
յետոյ կարող էր հին գերմանական պետու-
թեան մայրաքաղաք Ֆրանկֆուրտը նախա-
դասել Բելլինին, մանաւանդ որ նա դարե-
րի ընթացքում ազատ քաղաք է եղել և
ունի աւելի կենտրոնացած աշխարհագրա-
կան դիրք և բարեխաղող ոգ քան թէ Բե-
լլինը: Բայց իշխանը կասեցն է ընտրել, որ-
տեղ կառավարութիւնը և պարլամենտը
աքսորվածների դրութեան մէջ կը լինեն:
Բիսմարկ յայտնեց, որ այդ հարցը պաշտո-
նապէս քննութեան կենթարկվի բայեստա-
գի նիստերի հետեւեալ շրջանի ժամանակ
և այդքանը բաւական էր հասարակական
կարծիքը վրդովելու և կասեցնել բնակիչնե-
րին յուսադրելու համար:

Չը նայելով երեսուն տարիներից աւելի
զոյութիւն ունեցող իրանց ազատ հիմնա-
րութիւններին, Պրուսիան և Գերմանիան
դեռ ևս չեն ազատվել հեղինակութեանը
կուրորէն հպատակվելու հակումից: Ամենա-
զօր կանցների ցանկութիւնը զանազան կեր-
պով է մեկնվում: Յայտնվում է որ իշ-
խան Բիսմարկ այս առաջին անգամ է, որ
մտածում է հեռացնել կայսերական կառա-
վարութիւնը և պարլամենտը Բելլինից, որ
ենթարկված է առաջադեմների ֆեափափ
ազդեցութեանը: Գեռ առաջ իշխան Բի-
մարկ իր քաղաքական երկունքի ժամանակ
յոյս էր յայտնում, որ կարելի է պարլա-
մենտը Պոստգամ աքսորել, ուր կատարեալ
հանգստութիւն և կարգապահութիւն է
տիրում: Կասեցնել մասին նա նորերում է
մտածել: Եթէ այդ մտադրութիւնը կատար-
վի, նկատում են շփոթված գերմանական

լրագիրները, ուրեմն կայսերական ընտանիքն
էլ պետք է հեռանայ Բելլինից, հետեւա-
պէս Բիսմարկ չէր յայտնի այդպիսի ցան-
կութիւն, եթէ վաղօրօք ստացած չը լի-
նէր գերմանական կայսրի համաձայնու-
թիւնը: Թէպէտ իշխանի այս դիտաւորու-
թիւնը շատ օտարոտի է, բայց նա իրա-
գործել է իր աւելի էլ անհասկանալի և
օտարոտի դիտաւորութիւնները:

Գերմանական կանցիլը չափազանց յա-
մառ է իր ցանկութիւնները կատարելու
ժամանակ: Բայց ամեն բան և մինչև ան-
գամ Գերմանիայի միացնող յետագիմական
գործերը պէտք է չափ և սահման ունե-
նան: Չը նայելով, որ գերմանացիների հա-
մար սովորութիւն է դարձել խնարհու-
թեամբ կատարել Բիսմարկի բոլոր ցանկու-
թիւնները, այնուամենայնիւ նա անկարող
կը լինի համոզել պարլամենտական մեծա-
մասնութեանը, թէ կայսերութեան բարո-
ւութիւնը և նրա քաղաքական շահերը
պահանջում են, որ գերմանական պարլա-
մենտը Պոստգամի կամ Կասեցի արքունա-
կան այգիների և անտառների մօտ լինի:

ԲՈՒՆԴԱՐԻՍ

Սօֆիայից լրագիրներին հաղորդում են
հետեւեալը: Բօլզարիան նիշիլիստներով լի
է և Սօֆիան նրանց կենտրոնատեղին է,
զրում են գերմանական լրագիրների մէջ,
իսկ մենք կարդում ենք այդ տողերը և
ծիծաղում: Կան և այնպիսիները, որոնք ի-
րանց օգտին են ծառայեցնում թէ մեր
ծիծաղը և թէ գերմանական լրագիրների
զրածները: Նիշիլիստների զոյութիւնը Բօլ-
զարիայի մէջ երեւակայական է և այդպի-
սի լուրերի տարածվելուն առիթ է տուել
բօլզարական քաղաքական կուսակցութիւն-
ների ներքին անմիաբանութիւնը: Թէ Ռու-
սաստանը և թէ ռուս ժողովուրդը կարող
են հաւատարմութեամբ նայել Բօլզարիա-
յի վրա, որի բնակիչները հասկացողու-
թիւն չունեն նիշիլիզմի մասին և որտեղ
օտարական նիշիլիստները չեն կարող հիւ-
րասիրվել:

Տարբադդաբար այս տեղի պաշտօնական
անձինքներից մէկը ուղարկել էր ռուսաց
կառավարութեան մի նամակ Բօլզարիայի
մէջ նիշիլիստների երեւալու մասին և զը-
րանց ցուցակը, որտեղ դուրս էր բերված
բօլզարական արդարութեան միտքերի քա-
տուղարի ազգանունը: Պէտք է նկատել, որ
այս գէպը ամ իսկապէս գեր էր խաղում
անձնական թշնամութիւնը և այդ հաղոր-
դութիւնը նիշիլիստների մասին կատար-
ված էր յիշեալ քարտուղարին ֆեափափ
նպատակով:

Ռուսաց կառավարութեան ներկայացու-
ցիչը Բօլզարիայի մէջ իր ծանօթութիւնը
այդ երկրի հետ ապացուցանելուց յետոյ
նորերում ասել էր հետեւեալը: «Այստեղ
ապրող ռուսներից ես չեմ ծանաչում և
մինչև անգամ կասկածում այնպիսի մէկին,
որ քիչ թէ շատ համբաւելի լինէր նիշի-
լիստների հետ: Ինչ կը վերաբերի բօլզա-
րացիներին, նրանց կատարելապէս անկար-
ելի է կասկածել: Ամենաարմատական և ա-
զատամիտ բօլզարացիները ոչ թէ միայն
չեն մտածում նիշիլիզմի մասին, որի նպա-
տակը կոմունան և անիշխանութիւնն են,
այլ և հանրապետութեան մասին: Գուցէ
բօլզարացիներից շատերը անբաւական են այս
կամ այն երեւոյթից, բայց նրանք այնքան
զօհ են ռուսաց թաղաւորի և ժողովրդի
բարեբարութեանց, որ նրանք երբեք չեն
մտածի այն բանի մասին, որ կարող է վը-

տացնել ռուսներին: Մի խօսքով ես հաւա-
տացած եմ, որ բօլզարացիների մէջ նի-
շիլիստներ բոլորովին չը կան:»

ԱՒՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայից լրագիրներին հաղորդում են
հետեւեալը: Անցեալ տարվայ ապրիլին աւստ-
րիական արդարութեան միտքերը մի
վճիռ հրատարակեց, որով չեխերի լեզուն
ընդունված է համարվում Բօհեմիայի և
Մօրավիայի այն տեղերի ուսումնարաններին,
դատարանների և վարչական հիմնարկու-
թիւնների մէջ, որտեղ չեխական լեզուն եր-
կրի սովորական լեզու է: Այդ կարգադրու-
թեան անդրադարձնելու և կենտրոնականի-
րի անբարեխաղաղ ցնցերը մեծ դժուարու-
թիւններ ծագեցրին: Մի տեղ որ և է
զործնական թուղթ էր ուղարկվում և նա
յետ էր դարձնում այն պատճառով, թէ
այդտեղի սովորական լեզուն այն չէ, որով
զրված է այդ լեզուից, գրողը հակառակն
էր պնդում և այդպիսով անվերջանալի վի-
ճաբանութիւններ էին սկսվում: Կատարան-
ների մէջ էլ պատահել են այդպիսի վեճեր
և շատ անգամ գործը հասել է բարձրա-
գոյն դատաստանական պալատին, որի ան-
դամները, կենտրոնականները լինելով, գործը
վճռել են յօգուտ գերմանական լեզուի:
Բարձրագոյն դատարանի այդպիսի վճիռները
մի կողմից անբաւականութիւն պատճառե-
ցին չեխներին, միւս կողմից մի ուժեղ դէպ-
տուին կենտրոնականներին: Վերջինները
սկսեցին ապացուցանել, որ օրէնքի ոյժ ու-
նեցող բարձրագոյն դատարանի վճիռները
ապրիլի կարգադրութիւնը սահմանադրու-
թեան և օրէնքների հակառակ են համա-
րում:

Անցեալ տարվայ վերջը աւստրիական
պարլամենտի կենտրոնական կուսակցութեան
անդամները երկու առաջարկութիւն արին,
որոնցից մէկը պահանջում էր ապրիլի կար-
գադրութիւնը հակառակ համարել և նրան
ոչնչացնել, իսկ երկրորդը՝ գերմանական լե-
զուն պետական լեզու հրատարակել Աւստ-
րիայի բոլոր երկրներին համար: Այդ ա-
ռաջարկութիւնները յանձնվեցան 24 ան-
դամներից կազմված պարլամենտական մաս-
նաժողովի քննութեանը, որի ժամանակ
արդարութեան միտքերի պաշտօնակատար
Պրատիկ բացատրեց կառավարութեան հա-
յտնեղը այդ հարցի վրա: Նրա կարծիքով
յիշեալ կարգադրութիւնը կատարելապէս
օրինաւոր է և սահմանադրութեան համե-
մատ, որովհետեւ նա անհրաժեշտ է Բօհե-
միայի և Մօրավիայի համար, որտեղ չեխա-
կան լեզուն տիրապետում է: Կառավա-
րութիւնը այդպիսի վճիռներ կը հրատարակի
և այլ նահանգներին համար, եթէ նրանք
հարկաւորութիւն ունենան:

Պրատիկի այդ մեկնութիւնը կատարելա-
պէս բաւականացրեց մասնաժողովի աւսո-
նոմիտ անդամներին, իսկ կենտրոնական-
ները խստութեամբ մեղադրում էին կառա-
վարութեանը սահմանադրութիւնը խախ-
տելու համար:
Մասնաժողովի մեծամասնութիւնը յայտ-
նեց, որ յիշեալ կարգադրութիւնը կատա-
րելապէս օրինաւոր է, իսկ փոքրամասնու-
թիւնը հակառակ է և ապրիլի սկզբին հրա-
տարակվեցան երկու կողմերի զեկուցում
ները, որոնք երեկ շուտով կը քննվեն պար-
լամենտի մէջ:

Վերջինեալ կարգադրութեան ապրի-
նութեան հարցը կենտրոնականների ցան-
կացածի հակառակ հետեւեալներն ունեցաւ:
«Բոլոր լեզուներն և բարբառների հաւա-

սարութիւնը» մի չափազանց մեծ ժողովը-
դականութիւն ունեցող նշանաբան է Բօ-
հեմիայի մէջ: Սկիզբիայի լեհացիները և
չեխերը, Բուկովինի բուխները, Խաթրայի
խաղաղները, մի խօսքով Աւստրիայի բո-
լոր ազգութիւնները գերմանական լեզուի
դարեւոր առաւելութեանց ծնշված սկսեցին
բացարձակ պահանջել, որ ապրիլի կարգա-
դրութիւնը կայսերութեան այլ տեղերում
էլ գործադրվի, այսինքն որ երկրի սովորա-
կան լեզուները գերմանական լեզուի հետ
հաւասար իրաւունքներ ունենան: Կառա-
վարութիւնը երեկ ստիպված կը լինի կա-
մաց կամաց բաւականութիւն տալ այդ ի-
րաւացի պահանջներին:

Բացի յիշեալ հարցը աւստրիական պար-
լամենտը պէտք է քննէ չեխերի այն պա-
հանջը, որ Բօհեմիայի և Մօրավիայի մէջ
աւելացնվի այն միջնակարգ ուսումնարան-
ների թիւը, որտեղ առարկաները չեխական
լեզուով են աւանդվում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիայում շարունակվում է հակահեթա-
կան խաւար շարժումը: Կարճեալ երկու գերմա-
նացի պատմիկներ միացան հակաեթական
կուսակցութեան հետ և մի մեծ միտնգի մէջ
Բելլինիում նրանք պահանջում են վերականգնեց-
նել քրիստոնէական ոգին պետութեան մէջ, կըր-
կին մտցնել հոգեւոր ցնչուրա և այլն:

Այս օրերս հրատարակվեցաւ Գերմանիայում
բողքական մի քաջանայի, Բաւարացիների մի
բողիւր, որի մէջ հեղինակը ստատիկ յարձակ-
վում է հակաեթական շարժման դէմ, անուա-
նելով նրան գերմանական ազգի վրա ամօթալի
ստրկական դրօշմ դնող մի շարժում: Պատասխա-
նելով այն մարդկանց, որոնք կարծում են թէ
քրիստոնէութեանը վտանգ է սպառնում հեթա-
կան աշխարհայեցողութիւնից, գերմանական ա-
ստաժաբանը պատասխանում է: «Թէ դուք ճշշ-
մարիտ քրիստոնէայ չէք, դուք այդ նրանով էք
ապացուցանում, որ քրիստոնէութեանը և նրա
զաղափարները փրկելու համար դուք դիմում էք
պետական իշխանութեան օգնութեանը: Ի՞նչ
կարծիք կունենան հեթանոս քրիստոնէութեան
մասին, որ իսկապէս ինքն իրան յաղթված է
համարում աղաչելով պետութեան ուժից օգնու-
թիւն իր գոյութեան շարունակութեան համար:»

Լրագիրներին հետագում են որ Գիլի պա-
տասխանելով Բրուսին անգլիական պարլամեն-
տում ասեց որ իրան ոչինչ յայտնի չէ թիւրքաց
կառավարութեան հրամանով հայերի ձեռքից
ղէնքեր խլելու մասին: Խօսելով Տօնիսի խնդրի
մասին, Գիլի ասեց որ ցաւալի է թէ Ֆրանսիան
կամենում է վճռել այդ խնդրը եւրօպական
ընդհանուր համաձայնութիւնից դուրս: Բոլոր ա-
րեւելեան խնդիրները, աւելացրեց Չարլս Գիլի,
ինչպէս չափաւորաբար վերանորոգութիւնների և
թիւրքաց ֆինանսների վերականգնման խնդիրները
պէտք է նայուէս վճռվին եւրօպական ընդհա-
նուր համաձայնութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵՆԵՐՈՒԹԵՆԵՐ

Ա. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 7 մայիսի Պաշտօնապէս
հաղորդում են, Ֆինանսների միտքար Ա-
բազա իր խնդրիքի համեմատ հիւանդու-
թեան պատճառով արձակված է պաշտո-
նից, մնալով պետական խորհուրդի անդամ:
Ֆինանսների միտքարի օգնական Բունդին
հրամայված է Ֆինանսների միտքարութեան
մահում պատճառով երեք ամսով սուգ է
նշանակած:

Ա. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 7 մայիսի: Պետական
բանկի 50% տոմսերը առաջին շրջանի ար-
ժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 87 կ.,
երրորդ 94 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 75 կ.,
ներքին 50% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 224 ռ. երկրորդ 217 ռ. 50 կ.,
արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը
արժէ 92 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ., երրորդ
93 ռ. 12 կ., ոսկի 8 ռ. 4 կ.: Ռուսաց 1
րուբլ 1օնդոնի վրա արժէ 24,40 պէստ, ռու-
սաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208
մարկ 50 պֆ., ֆարիդի վրա արժէ 257
ֆրանկ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Цѣна 25 коп.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.